ԳՖՀ-ի ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՒԼՈՒՄ (1982—1986)

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

70-ական թվականների վերջին և 80-ական թվականների սկզբին Եվրոպական տնտեսական միության (ԵՏՄ) շրջանակներում մի շարք նախաձեռնություններին բերած գործուն մասնակցության և արաբա-իսրայելական կոնֆլիկտի հակամարտ կողմերի նկատմամբ վարած հավասարակշռված քաղաքականության հետևանքով Մերձավոր արևելքում ԳՖՀ-ի դիրքերը զգալիորեն ամրապնդվեցին։ Միաժամանակ ԳՖՀ-ին հաջողվեց գրավել առավել ազդեցիկ տեղերից մեկը՝ դառնալով շրջանի երկրների տնտեսական պարտնյոր. ԳՖՀ-ն հանդիսանում է երկրորդ, իսկ արաբական մի շարք երկրների հետ՝ առաջին առևտրական տերությունը[1]։

Բոննում համարյա 13 տարի կառավարած լիբերալ-սոցիալիստական կոալիցիայի մասնակիցների՝ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության (ԳՍԴԿ) և Ազատդեմոկրատական կուսակցության (ԱԴԿ) հարաբերություններում երկար ժամանակ հասունացող ճգնաժամը ավարտվեց նրանով, որ 1982 թ. հոկտեմբերի 1-ին իշխանության գլուխ անցավ «պահպանողական-լիբերալ կոալիցիան»՝ Քրիստոնեադեմոկրատական միության (ՔԴՄ), Քրիստոնեասոցիալական միության (ՔՍՄ) և ԱԴԿ-ի մասնակցությամբ։ ԳՖՀ-ի վեցերորդ կանցլերը դարձավ ՔԴՄ-ի նախագահ Հելմուտ Քոլը*։ Նոր կանցլերը հանդես եկավ «նորացման քաղաքականությամբ», որն արտաքին քաղաքականության ասպարեզում հանգեց դեպի աջ զգալի թեքմամբ, ԱՄՆ-ի արտաքին քաղաքական ագրեսիվ գործողություններին անառարկելի աջակցմամբ։

Բոնդեստագում կառավարական իր առաջին հայտարարության մեջ Քոլը վստահեցրեց, թե արևմտագերմանա-ամերիկյան հարաբերությունները ինքը դուրս կբերի «աղջամուղջից», կամրապնդի և կկայունացնի դրանք։ Մատնացույց անելով, որ ՆԱՏՕ-ին անդամակցելը ԳՖՀ-ի համար «խաղաղության պաշտպանության գործուն քաղաքականության» հիմքն է, կանցլերը հանդես եկավ ՍՍՀՄ-ի և նրա վարած արտաքին քաղաքականության խիստ քննադատությամբ[2]։

Կանցլեր Քոլն ու նրա կառավարությունը ոչ պակաս կարևոր նշանակություն էին տալիս և այժմ էլ տալիս են զարգացող և, հատկապես, Մերձավորարևելյան երկրների հետ հարաբերություններին։ Ֆեդերալ կառավարությունը անփոփոխ թողեց և ջանում է խստիվ պահպանել ԳՖՀ-ի Մերձավորարևելյան քաղաքականության՝ դեռ 70-ական թվականների սկզբին մշակված հիմնական ստրատեգիական կուրսը՝ «հավասարակշռվածությունը»։ ԳՖՀ-ը շարունակում է խորացնել Իսրայելի հետ բարեկամական հարաբերությունները ու միաժամանակ արաբական երկրների հետ զարգացնել «ավանդական բարվոք հարաբերություններ», փորձելով խուսափել այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են որևէ կերպ ազդել գոյություն ունեցող դրության

---

[1] M. Menta, West Germany and the Middle East, „Middle East", L., 1985, N 130, p. 29—40.

* Հոդվածում փորձ է արվում բացահայտելու ԳՖՀ-ի Մերձավորարևելյան քաղաքականության հիմնական միտումները և կանցլեր Հ. Քոլի կառավարման ժամանակաշրջանում արաբա-իսրայելական կոնֆլիկտի նկատմամբ դրսևորված դիրքորոշումը։

[2] "Verhandlungen des Deutschen Bundestages, (այսուհետև՝ „Verhandlungen"). 9. Wahlperiode, Bd. 122, 121. Sitzung, 13. Oktober 1982, S. 7220—7223.

վրա և այն շեշտակիորեն փոխել՝ հարվածի տակ դնելով Բոննի դիրքերը Իսրայելում և կամ արաբական աշխարհում։ Դա երևում է նաև Հ. Քոլի 1983 թ. մայիսի 4-ի կառավարական հայտարարությունից, որտեղ սահմանված են Մերձավոր արևելքում ԳՖՀ-ի քաղաքականության և արաբա-իսրայելյան կոնֆլիկտի նկատմամբ վերաբերմունքի երեք հիմնական սկզբունքները. Իսրայելի գոյության իրավունքը՝ ճանաչված և անվտանգ սահմաններում, պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքը և, վերջապես, այն, որ տվյալ երկու իրավունքներից և ոչ մեկը չպետք է իրագործվի ի հաշիվ մյուսի, այլ խոսքով՝ երկու կողմերն էլ պետք է փոխադարձաբար հրաժարվեն իրենց նպատակին հասնելու համար ուժի կիրառությունից[3]։

Քոլի կառավարությունը Իսրայելի հետ պահպանվող հարաբերություններում նոր տարրեր մտցրեց։ Այսպես, համոզելով Իսրայելին, որ ԳՖՀ-ի գերմանացիների շրջանում «պատմական և բարոյական կուրություն» գոյություն չունի և շարունակ կրկնելով «ողբերգական անցյալի պատճառով հրեաների նկատմամբ գերմանացիների հատուկ պատասխանատվության» մասին, ֆեդերալ կառավարությունը միաժամանակ ընդգծում էր, որ բոլոր գերմանացիների հավաքական հանցանքի վերաբերյալ մշտական հիշեցումներն ու կրշտամրանքները և նրանց նոր սերնդից այդ հանցանքն ընդունելու պահանջն անարդարացի են։ ԳՖՀ-ի արտաքին գործերի նախարարության պետական մինիստր Ալոիզ Մերտեսը դերմանա-իսրայելական 6-րդ կոնֆերանսում հայտարարեց. «Գերմանացիների նոր սերունդն այլ կերպ է մտածում։ Դա բխում է այն բանից, որ Իսրայելի կառավարության քաղաքական ձեռնարկումներն ու ռազմական գործողությունները Դերմանիայում քննադատաբար են դիտվում և առարկայականորեն են գնահատվում։ Ավելի ու ավելի մեծ թիվ են կազմում այն գերմանացիները, որոնք գտնում են, որ Իսրայելը ոչ թե կենդանի մնացած հրեաների երկիրն է, այլ՝ Մերձավոր ու Միջին արևելքում ամենից մարտունակ ռազմական տերությունը»[4]։ Ըստ այդմ, մեղավորության զգացողությունը չպետք է համարվի երկու ժողովուրդների ու պետությունների միջև բարվոք հարաբերությունների ամուր հիմք, քանի որ այն, Իսրայելի նկատմամբ ԳՖՀ-ում ստեղծված հասարակական կարծիքի պայմաններում, օրերից մի օր կարող է ուղղվել իր ստեղծողների դեմ։ Քոլի կառավարությունը միջազգային սիոնիստական շրջանակներին և Իսրայելի կառավարությանը համոզեց, որ ավելի լավ կլինի, եթե Իսրայելի հետ ԳՖՀ-ի հարաբերությունները կառուցվեն հետևյալ հիմքի վրա. Իսրայելը Մերձավոր արևելքում «պետական-պառլամենտական միակ դեմոկրատիան է, որի հիմքի վրա էլ ստեղծվում են հիմնարար շահերն ու համատեղ աշխարհայացքը»[5]։

Հանդես գալով որպես «Կոնրադ Ադենաուերի քաղաքական ժառանգորդ», կանցլեր Քոլը 1984 թ. Երուսաղեմ կատարած իր պաշտոնական այցելության ժամանակ վստահեցրեց, որ ԳՖՀ-ը Իսրայելի անվտանգության ամրապնդման մեջ տեսնում է իր մերձավորարևելյան քաղաքականության «կարևորագույն նպատակներից մեկը»[6]։ Ֆեդերալ կառավարության անունից նա վստահեցրեց Իսրայելի ղեկավարությանը, որ Մերձավոր արևելքի վերաբերյալ ԵՏՄ-ի համատեղ բոլոր հայտարարությունները հանդիսանում են լոկ Իսրայելին աջակցելու մի ձև և բնավ էլ ուղղված չեն նրա դեմ։ ԵՏՄ-ի դիրքորոշման վերաբերյալ պարզորոշ խոսում է Իսրայելին ՄԱԿ-ի անդամների շարքից վտարելու

---

[3] „Verhandlungen", 10. Wahlperiode, Bd. 124, 4. Sitzung, 4. Mai 1983, Bonn, 1983, S. 72.

[4] „Bulletin des Presse— und Informationsamtes der Bundesregierung", (այսուհետև՝ „Bulletin"), № 109, 11. XI. 1982, S. 994.

[5] Նույն տեղում, № 6, 18. I. 1984, էջ 45—46։

[6] Նույն տեղում, № 13, 2. II. 1984, էջ 111։

վերաբերյալ արաբների պահանջներին արևմտաեվրոպացիների «վճռական հակահարվածի» փաստը[7]։

Միաժամանակ Քոլի կառավարությունը շարունակեց Հ. Շմիդտի կառավարության գիծը, դատապարտելով Իսրայելի արտաքին և ներքին քաղաքականության որոշ կողմերը։ Գործնականում դա դրսևորվեց սոսկ բռնագրավված արաբական տարածքներում բնակավայրեր ստեղծելու, մարդու իրավունքները ոտնահարելու և Գոլանը վարչականորեն Իսրայելին կցելու իսրայելական քաղաքականության ձևական քննադատության մեջ[8]։ Ըստ որում, այդ քննադատությունն էլ կրեց այն ձևը, թե իբր այդ քայլերով Իսրայելը «խոչընդոտում է կոնֆլիկտի կարգավորման ուղղությամբ ամերիկյան ջանքերին»[9]։ Բռնագրավված արաբական տարածքների հարցի՝ Իսրայելի կողմից «կարգավորման» նկատմամբ կանգնելը Քոլի իսկական վերաբերմունքը պարզորոշ դրսևորվեց նրա այն հայտարարության մեջ, ըստ որի Իսրայելի կառավարությունը պետք է անցկացնի «վստահություն ներշնչող միջոցառումներ»՝ «բարելավելու համար գրավված մարդերի բնակչության կենսապայմանները»[10], սակայն ոչ մի խոսք չէր ասվում այդ տարածքները արաբներին վերադարձնելու մասին։

Մերձավոր արևելքում ԳՖՀ-ի արտաքին քաղաքականության ճշտորոշման և իրականացման հարցում Իսրայելի ազդեցությունը պարզորոշ երևաց Սաուդյան Արաբիային արևմտադերմանական տանկեր վաճառելու մասին որոշումը պետական մակարդակով չեղյալ հայտարարելու փաստում։ «Շպիգել» հանդեսը գրում էր, որ, «կանգնելով իսրայելացիների և սաուդացիների միջև ընտրություն կատարելու առաջ, գերմանացիները (արևմտագերմանացիները— Ա. Մ.) հարկադրվեցին մի «փոքր վատություն» անել և արաբներին հիասթափեցնել»[11]։ Եվ դա այն բազում հայտարարություններից հետո, թե իբր ԳՖՀ-ը առաջնորդվում է ոչ թե «հրեաները կամ արաբները», այլ՝ հավասարակշռված հարաբերությունների համար հիմք հանդիսացող «և՛ հրեաները, և՛ արաբները» լոզունգով[12]։ Փաստորեն շրջանցվում էր նաև այն կարևոր նշանակությունը, որ ԳՖՀ-ի համար ունի Սաուդյան Արաբիայի հետ կատարվող առևտուրը։ Այդ փաստն ուշագրավ է նաև այն իմաստով, որ և՛ միջազգային սիոնիստական շրջանները, և՛ ԱՄՆ-ի ու Իսրայելի կառավարությունները համոզված էին ԳՖՀ-ի այն երաշխիքների մեջ, որ, հաշվի առնելով «Իսրայելի անվտանգության հատուկ կացությունը», այդ զենքը ուղղվելու է ոչ թե նրա դեմ, այլ՝ իբր «Սաուդյան Արաբիայի անվտանգությանն սպառնացող Սովետական Միության ծավալապաշտական նկրտումների դեմ», որպես պնդում էին նաև թագավոր Ֆահդն ու արտաքին գործերի մինիստր Սաուդ ալ-Ֆեյսալը[13]։

Իսրայելին տրվող կոնկրետ բարոյաքաղաքական աջակցության ու նյութական օգնության բազմաթիվ փաստերի և Իսրայելյան որոշ գործողությունները միայն խոսքով դատապարտելու իրողության ուսումնասիրությունը թույլ է տալիս Իսրայելի հետ ԳՖՀ-ի կապերը բնութագրել որպես «Մերձավոր արևելքում ՆԱՏՕ-ի պլացդարմ», Իսրայելի և ԳՖՀ-ի կառավարող շրջանների դասակարգային ընդհանուր շահերի հիման վրա հետագա մերձեցմանը և ամրապընդմանը նպատակամղված սերտ հարաբերություններ։ Եվ որքան էլ, որ ԳՖՀ-ի կառավարությունը ազդարարի իր մերձավորարևելյան «հավասա-

---

7 Նույն տեղում, № 109, 11. XI. 1982, էջ 995։

8 Նույն տեղում, № 97, 27. IX. 1983, էջ 898։

9 Նույն տեղում, № 17, 9. II. 1983, էջ 158։

10 «Аль-Ахрам», Каир, 31. X. 1984.

11 "Der Spiegel,, N 40, 3. Oktober 1983, S. 42.

12 „Bulletin", № 46, 18. 01. 1984, S. 47.

13 „Der Spiegel", N 42, 17. Oktober 1983, S. 17—19; „Bulletin", N 6, 18. I. 1984, S. 49; N 13, 2. II. 1984, S. 120.

բակշռված» քաղաքականության մասին, դա չի կարող սասանել այն իրողությունը, որ իրականում այդ քաղաքականությունը բնութագրվում է արևմտագերմանացի մի հետազոտողի այն դիպուկ դիտողությամբ, թե «Քոլի մուտքը արաբական աշխարհ անցնում է իսրայելական դարպասով»[14]։

80-ական թվականներին ԳՖՀ-ի հարաբերությունները արաբական երկրների հետ նոր փոփոխություններ կրեցին. ավելի ակնբախ դարձավ առհասարակ դեպի արտահանում կողմնորոշված ԳՖՀ-ի արդյունաբերության կապվածությունը Մերձավոր արևելքից՝ և որպես «վաճառահանման հուսալի ու տարողունակ շուկայի», որտեղ ավելի շատ են արևմտագերմանական ապրանքներ արտահանվում, քան դեպի Հյուսիսային Ամերիկա, և որպես նավթի հիմնական մատակարարի (54 %)[15]։ Եվ անկախ Բոնnի այն հավաստիացումներից, թե ինքն իբր չի նկրտում այդ շրջանում ձեռք բերել ազդեցության գոտիներ ու տիրապետող դիրք, իրերի իսկական վիճակը հակառակն է ցույց տալիս։ ԳՖՀ-ի պլաններում արաբական աշխարհին հատկացվող տեղն էր պատճառը, որ Եվրոպայից և ԱՄՆ-ից հետո կանցլեր Քոլի առաջին ուղևորության երթուղին ընդգրկեց Հորդանանը, Եգիպտոսը և Սաուդյան Արաբիան։

Արաբական աշխարհ լայնորեն ներթափանցելու համար ԳՖՀ-ն պաղեստինյան հարցում ունի ինքնատիպ դիրքորոշում։ Բոնnի այժմյան կառավարությանը բնորոշ է պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի նկատմամբ յուրահատուկ, հաճախ հակասական մոտեցումը։ Մի կողմից, կասկածի տակ չի դրվում պաղեստինյան ժողովրդի իրավունքը, իսկ մյուս կողմից, ֆեդերալ կառավարությունը գտնում է, որ այս հարցում իբր թե ժխտական տարր է հանդիսանում Պաղեստինի ազատագրական կազմակերպության (ՊԱԿ) «անհիմն» պահանջը՝ իրեն համարելու պաղեստինյան ժողովրդի միակ ներկայացուցիչը և պաղեստինյան սեփական պետության ստեղծումը դիտելու որպես ինքնորոշման իրավունքի կենսագործման միակ ձև։ Միաժամանակ, Բոնnը հայտարարում է, որ պաղեստինցիները կատարելապես իրավունք ունեն որոշելու իրենց ապագան, ինչպես և այն հարցը, թե ով է ներկայացնելու պաղեստինյան ժողովրդին[16]։ Մի կողմից, Բոնnի կառավարությունը գտնում է, որ ՊԱԿ-ը չի հանդիսանում պաղեստինյան ամբողջ ժողովրդի ներկայացուցիչը, իսկ մյուս կողմից ՊԱԿ-ին գնահատում է որպես քաղաքական կարևոր ուժ և պաղեստինյան ժողովրդի նկատմամբ իր դիրքորոշումը կառուցում է նրա հետ հաստատված հարաբերությունների վրա։ ՊԱԿ-ի նկատմամբ ԳՖՀ-ի վերաբերմունքի մեջ նկատվում է Քոլի կառավարության և սոցիալ-լիբերալ կոալիցիայի (Վ. Բրանդտ, Հ. Շմիդտ) նախորդ կառավարությունների դիրքորոշման որոշակի հաջորդականություն. ԳՖՀ-ը ՊԱԿ-ին կճանաչի լոկ այն ժամանակ, երբ վերջինս անվերապահորեն կընդունի Իսրայելի գոյության իրավունքը ճանաչված և անվտանգ սահմաններում և կհրաժարվի նրա դեմ ուղղված գործողություններից[17]։

Դատելով, որ պաղեստինցիների կողմից ինքնորոշման իրավունքը «դարձել է չարաշահության և ոչ ճիշտ մեկնաբանության զոհ», քանի որ նրանց հասկացությամբ դա իրենց նախապես իրավունք էր տալիս ոչնչացնելու Իսրայելը և տնօրինելու Լիբանանում, և որ 1982 թ. Ֆեսի արաբական վեհաժողովում էլ ՊԱԿ-ը հստակորեն չընդունեց Իսրայելի գոյության իրավունքը, ըստ ֆեդերալ կառավարության, պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքը կարող է իրագործվել միայն արաբա-իսրայելական կոնֆլիկտի կարգավորման վերաբերյալ Իսրայելի մասնակցությամբ և համաձայնությամբ կնքված պայ-

---

[14] „Frankfurter Allgemeine Zeitung", 3. X. 1983.

[15] „Bulletin", № 103, 5. X. 1983, S. 949; N 102, 12. IX. 1984, S. 903.

[16] „Bulletin", № 109, 11. XI. 1982, S. 996; N 20, 18. II. 1983, S. 188.

[17] „Verhandlungen", Bd. 122, 128. Sitzung, 12. November 1982, Bonn, 1982, Anlage 34, S. 7919.

մանագրով[18]։ ԳՖՀ-ի նույնիսկ նմանօրինակ գիրքը, ըստ որի պաղեստինցիների ինքնորոշման իրավունքն ամբողջությամբ կախման մեջ է դրվում Իսրայելի համաձայնությունից, վերջինիս կառավարողների կողմից դիտվում է որպես «ՊԱԿ-ի սիրաշահում» և ենթարկվում խիստ քննադատության[19]։

Իրանա-իրաքյան շարունակվող պատերազմի նկատմամբ ԳՖՀ-ը հայտարարել է իր խիստ չեզոք դիրքորոշման մասին և երկու կողմերին էլ կոչ է անում զենքերը վայր դնել և նստել բանակցությունների սեղանի շուրջ[20]։

Ֆեդերալ կառավարությունը ուշադիր հետևում է նաև Լիբանանում տեղի ունեցող իրադարձությունների զարգացմանը, հանդես է գալիս հօգուտ երկրի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պահպանման, աջակցում է բոլոր ասպարեզներում լիբանանյան պետության հեղինակությունը վերականգնելու և երկրի տարբեր խմբավորումները միավորելու լիբանանյան կառավարության փորձերին[21]։

Ֆեդերալ կառավարությունը ձեռք չի քաշում Հորդանանին քեմփ-դևիդյան համաձայնագրի մեջ ներքաշելու փորձերից։ Նա ջերմորեն ողջունեց Եգիպտոսի հետ Հորդանանի դիվանագիտական հարաբերությունների վերահաստատումը, դա գնահատելով որպես Մերձավոր արևելքում խաղաղության որոնման գործում կարևոր ներդրում[22]։

Սոցիալիստական կողմնորոշում ունեցող արաբական երկրների հեղափոխական պրոցեսում նկատվող ճգնաժամային երևույթների[23], Մերձավոր և Միջին արևելքում դեպի աջ կատարվող ընդհանուր տեղաշարժերի և հակասովետիզմի ու հակակոմունիզմի աշխուժացման պայմաններում Իսրայելի հետ ԳՖՀ-ի հարաբերությունների ամրապնդումը արաբական մի շարք կառավարող շրջանների կողմից չի դիտվում որպես արաբական երկրների նկատմամբ ԳՖՀ-ի թշնամական վերաբերմունքի դրսևորում, մանավանդ, որ ինչպես նշվեց վերևում, Բոննը վարպետորեն օգտագործում է պաղեստինյան հարցում իր յուրահատուկ դիրքորոշումը։ Դրա հետ մեկտեղ, արաբական երկրների կառավարություններն իրենք էլ, հետևելով Բոննի հավաստիացումներին այն մասին, թե այդ մերձեցումը ազդեցություն չի գործի Մերձավոր արևելքում ԳՖՀ-ի հավասարակշռված կուրսի վրա, չեն բողոքում արևմտագերմանա-իսրայելյան փոխհարաբերություններում վերելքի նոր ալիքի դեմ։ Դեռ ավելին. արաբական աշխարհի քաղաքական ազդեցիկ ուժերը հանձին ԳՖՀ-ի տեսնում են մի տերության, որի հետ գոյություն ունեցող փոխհարաբերությունները կարող են փոխարինել հասարակական լայն խավերի աչքում իրենց վարկաբեկող փոխհարաբերություններին ԱՄՆ-ի հետ, որի բացահայտ իսրայելաթեք դիրքորոշումը քաղաքական մանևրի ոչ մի հնարավորություն չի թողնում։ Միաժամանակ, նրանց կարծիքով ԳՖՀ-ի տնտեսական հզորությունը խոչընդոտ կհանդիսանա ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ արաբական պետությունների համագործակցությանը։

Ի տարբերություն իր նախորդի, Քոլի կառավարությունն ընդգծում է իր կատարյալ համաձայնությունը ամերիկյան մերձավորարևելյան քաղաքականության հետ, ԱՄՆ-ին համարելով ժամանակակից փուլում միակ տերությունը, որն իր ռազմական հզորությամբ և քաղաքական ազդեցությամբ նպաստում է Մերձավոր արևելքում խաղաղության հաստատմանը։ Նույնիսկ Վաշինգ-

---

18 „Bulletin", № 109, 11. XI. 1982, S. 995; № 28, 24. III. 1983, S. 243.

19 „Der Spiegel",N 49, 6. Dezember 1982, S. 58; „Bulletin", № 6, 18. I. 1984, S. 47.

20 „Bulletin", N 100, 7. IX. 1984, S. 882.

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում, № 27, 19. III. 1983, էջ 234, № 6, 18. I. 1984, էջ 47, № 134, 6. XI. 1984, էջ 1186։

23 Н. О. Оганесян, Революционный процесс в современном арабском мире (особенности и перспективы). «IV Всесоюзная конференция арабистов. Тезисы докладов», Ереван, 1985, с. 52—54.

տոնի այնպիսի ագրեսիվ գործունեությունը, ինչպիսին Լիբիայի ռմբակոծումն էր, Ֆեդերալ կառավարության կողմից խստորեն չբողոքարկվեց, ինչպես դա կատարվեց, օրինակ, արևմտաեվրոպական մյուս երկրներում[24]։ ԵՏՄ-ի երկրները, Բոննի կարծիքով, Մերձավոր արևելքում որոշակիորեն սահմանափակ դեր ունեն գոյություն ունեցող կոնֆլիկտի վերացման հարցում և չպետք է ապակողմնորոշեն արաբական երկրներին Արևմտյան Եվրոպայի հնարավորությունները գնահատելիս։ «Դրա համար էլ եվրոպական մերձավորարևելյան քաղաքականությունը երբևէ չպետք է անջատվի ԱՄՆ-ից կամ անցկացվի ընդդեմ ԱՄՆ-ի»,— պնդում են Բոննում[25]։ Այն պետք է լրացնի ամերիկյան քաղաքականությունը և աջակցի դրան։ ԳՖՀ-ի կառավարության համար «առանձնահատուկ կարևոր նպատակն» է իր մերձավորարևելյան քաղաքականության համաձայնեցումը ամերիկյանի հետ։

Արևմտյան Գերմանիայի մերձավորարևելյան քաղաքականության սկզբունքների «անկեղծությունը» կառուցվում է հակակոմունիզմի և հակասովետիզմի խախուտ հիմքի վրա։ Բոննի կառավարությունը մերձավորարևելյան կոնֆլիկտի կարգավորման հարցում իր շահագրգռվածությունն ու հույսերը պայմանավորում է Մերձավոր և Միջին արևելքում ՍՍՀՄ-ի վարկի անկման և դիրքերի թուլացման հետ։ ԳՖՀ-ում անհիմն պնդում են, որ ՍՍՀՄ-ը հատկապես միջազգային լարվածությունը սրելու և իր դիրքերը ամրապնդելու համար երրորդ աշխարհի երկրներին ներքաշում է Արևելք-Արևմուտք համընդհանուր կոնֆլիկտի մեջ։ Ֆեդերալ կառավարության կարծիքով, «Սովետական Միությունը Մերձավոր արևելքի գործերին միջամտելու հնարավորություն կստանա այդ շրջանում միայն ու միայն լարվածության հետագա պահպանման և ռազմական նոր կոնֆլիկտի դեպքում, ինչը որ չի բավարարում ԳՖՀ-ին»[26]։ Ֆեդերալ կառավարությունը ստապատիր կերպով պնդելով, թե իբր Մերձավոր արևելքում առկա է «սովետական սպառնալիք» Արևմուտքի հետ իր համատեղ շահերին, համաձայնվեց ՆԱՏՕ-ի գործունեությունը տարածել այդ շրջանի և Պարսից ծոցի վրա[27]. դա արաբական առաջադիմական ուժերի կողմից դիտվում է որպես իմպերիալիստական տերությունների, այդ թվում ԳՖՀ-ի, ծավալապաշտության բացահայտ դրսևորում։

Վերջին տարիներին Մերձավոր արևելքում իրադրության վտանգավոր սրումը հետևանք է ԱՄՆ-ի նեոգլոբալիզմի քաղաքականության, որը այդ շրջանին կարևորագույն հենարանի դեր է հատկացնում իր իմպերիալիստական-հեգեմոնիստական ծրագրերի իրագործման խնդրում։ Շրջանում ուժեղացնելով իր ռազմական ներկայությունը, Վաշինգտոնը ձգտում է վերացնել իր համար անցանկալի վարչակարգերը, ճնշել ազգային-ազատագրական շարժումը։ Տեղային կոնֆլիկտներ հրահրելու իրենց կուրսը վարելիս, Միացյալ Նահանգները Մերձավոր արևելքում հենվում են Իսրայելի կառավարող շրջանների վրա, խրախուսելով ու աջակցելով արաբական երկրների և պաղեստինյան ժողովրդի դեմ ուղղված նրանց ծավալապաշտ քաղաքականությունը։

ՍՍՀՄ-ը վճռականորեն հանդես է գալիս որպես ռեգիոնալ առճակատումները հարթելու կողմնակից։ ՍՄԿԿ գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը ԱՄՆ-ի պետական քարտուղար Ջ. Շուլցի հետ զրույցի ժամանակ նշեց. «Ինչ վերաբերում է ռեգիոնալ կոնֆլիկտներին, ապա մեզանում այն տպավորությունն է ստեղծվում, որ ԱՄՆ-ում դրանք դիտում են որպես առճակատման մակարդակի միջոցով մանևրելու, ուժի քաղաքականության և հակասովետական պրոպագանդայի մշտական ռեզերվ...։ Մենք գտնում ենք, որ չի կարելի

---

[24] „Der Spiegel", N 17, 21. April 1986, S. 19—21; N 19, 5. Mai 1986, S. 8—9.

[25] „Bulletin", № 109, 11. XI. 1982, S. 995.

[26] Նույն տեղում, № 6, 20. I. 1983, էջ 49։

[27] „Der Spiegel", № 42, 17. Oktober 1983, S. 18; „Bulletin", № 16, 10. II. 1984, S. 141.

ռեգիոնալ կոնֆլիկտները վերածել երկու սիստեմների, հատկապես ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի հակամարտության քաղաքականության»[28]։ Սովետական Միությունը հանդես է եկել և շարունակում է հանդես գալ հօգուտ մերձավորարևելյան կոնֆլիկտի արդարացի կարգավորման։ ՍՍՀՄ-ի կառավարության կարծիքով, նշեց Մ. Ս. Գորբաչովը «Ոմիտա» թերթի խմբագրության հարցերին պատասխանելիս, արաբա-իսրայելյան կոնֆլիկտի քաղաքական կարգավորման սկզբունքային հիմքը հետևյալ տարրերի կենսագործումն է. իսրայելական զորքերը պետք է դուրս բերվեն այն տարածքներից, որոնք գրավված են 1967 թ. հունիսից ի վեր, պետք է ճանաչվեն Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքները, այդ թվում սեփական պետականություն ստեղծելու իրավունքը, Մերձավոր արևելքի բոլոր պետությունները, ներառյալ Իսրայելը, պետք է ապրեն խաղաղության պայմաններում, անվտանգ և ճանաչված սահմանում[29]։

Սովետական Միության խաղաղասիրական հետևողական քաղաքականությանը հակադրվում են ԱՄՆ-ը, հյուսիս-ատլանտյան ագրեսիվ բլոկի գծով նրա դաշնակիցները և առաջին հերթին Արևմտյան Գերմանիայի կառավարող շրջանները։ Ընթանալով զարգացող երկրների նկատմամբ իմպերիալիստական պետությունների ընդհանուր քաղաքականության հունով, ջանալով արգելակել այդ երկրներում հեղափոխական պրոցեսների զարգացումը և դրանց պահել կապիտալիզմի ոլորտում, ֆեդերալ հանրապետությունը շարունակ գտնվել է նեոգաղութարարական ճկուն մեթոդների և արաբական երկրների հետ փոխհարաբերությունների ձևերի տևական որոնումների մեջ, ցանկանալով «գրգռող» հարցերը «խլացնել փոխզիջումային հիմքի վրա», բնականաբար, այնպիսի փոխզիջումի, որը թույլ կտար պահպանել իր դիրքերը[30]։

Ամփոփելով նշենք, որ Մերձավոր արևելքում կանցլեր Քոլի հայտարարած «տևականության և հավասարակշռվածության» արտաքին քաղաքական սկզբունքը[31] նպատակ ունի ԳՖՀ-ին ապագայում ևս բերելու ոչ քիչ շահաբաժին, քանի որ այդ շրջանում Բոննի արտաքին քաղաքական կուրսը բավականաչափ հետևողական է և անմիջականորեն արձագանքում է տեղական քաղաքական կլիմայի փոքրագույն իսկ տատանումներին, առանց սակայն դուրս գալու ընդհանուր հավասարակշռված կուրսի շրջանակներից։

БЛИЖНЕВОСТОЧНАЯ ПОЛИТИКА ФРГ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ (1982—1986)

АШОТ МАНУЧАРЯН

Правительство Г. Коля не ввело коренных изменений в ближневосточную политику ФРГ, оставив в основе принцип «сбалансированности» в отношении сторон арабо-израильского конфликта. Практически же федеральное правительство продолжает поддерживать Израиль, внеся некоторые коррективы в свою политику. Позиции Бонна на Ближнем Востоке укрепляются, что обусловлено стабильностью экономических связей со странами региона и оперативным реагированием на малейшие сдвиги местного политического климата. Правительство Г. Коля и в рамках ЕЭС содействует ближневосточной политике США, выдвигая на первый план идеологического проникновения в регионе антисоветские и антикоммунистические лозунги.

---

28 «Սովետական Հայաստան», 16. IV. 1987։

29 Նույն տեղում, 20. V. 1987։

30 К. Н. Брутенц, Освободившиеся страны в 70-е годы, М., 1979, с. 82.

31 „Frankfurter Allgemeine Zeitung", 13. XII. 1982.